ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 1.

Գողթ գյուղական համայնքի հաշվետու համայնքային ժողովի

22. 07. 2011թ. Գյուղ Գողթ

2011 թվականի հուլիսի 22-ին տեղի է ունեցել Գողթ համայնքի հաշվետու համայնքային ժողովը:

Մասնակցությամբ՝

Համայնքի ավագանու անդամներ

1. Ալեքսան Մովսիսյան
2. Մաքսիմ Մարտիրոսյան
3. Լևոն Հարությունյան
4. Գագիկ Հովհաննիսյան
5. Գարեգին Ղարիբյան
6. Դավիթ Թադևսյան
7. Սամվել Գալստյան

Համայնքի ղեկավարի աշխատակզմից

1. Ռստանիկ Խաչատրյան
2. Սիրակ Հովսեփյան
3. Բայանդուր Պետրոսյան
4. Աղվան Կարապետյան
5. Աբել Ղարիբյան
6. Արեգնազ Կարապետյան
7. Թամարա Կարապետյան
8. Էմին Ղարիբյան
9. Տիգրան Պետրոսյան

Համայնքի բնակիչներ՝ 110

ՕՐԱԿԱՐԳ

1. Համայնքի ղեկավարի հաշվետվությունը
2. Ընթացիկ հարցեր

Զեկուցող՝ Համայնքի ղեկավար Ա. Հակոբյան

ԼՍԵՑԻՆ՝ Ա. Հակոբյանի զեկուցումը

Ա. Հակոբյանը իր շնորհակալությունը հայտնեց Գողթ համայնքի բնակչությանը, ավագանու անդամներին և բոլոր նրանց ովքեր մասնակցում էին ընդհանուր ժողովին:

- Հարգելի համայնքի բնակիչներ, հյուրեր, ողջունում եմ ձեզ ժողովին ներկա գտնվելու, համայնքում առկա խնդիրների վերաբերյալ քննարկմանը մասնակցելու համար:

Այսօրվա մեր ժողովի նպատակը կայանում է նրանում, թե ինչ է կատարվել համայնքում վերջին մեկ տարվա ընթացքում և ինչ պետք է կատարվի առաջիկայում:

-Կատարվել է խմելու ջրի 1կմ երկարությամբ նոր ջրագծի անցկացումը: Մաքրվել է և որոշ չափով վերանորոգվել են գյուղամիջյան ճանապարհները: Պատշաճ մակարդակի վրա է գտնվում գյուղի սանիտարական վիճակը և աղբահանման գործընթացը, որը կատարվում է ամեն օր : Սակայն կատարած լավ աշխատանքների կողքին կան մի շարք թերություններ, որոնք շտկման կարիք ունեն:

Օրինակ՝ հողի հարկի, գույքահարկի, վարձավճարների և մնացած հարկային պարտավորությունների կատարման մեջ համայնքի բնակչությունը թերանում է:

Թերություններ կան նաև քաղաքաշինության բնագավառում:

Գյուղի մի շարք բնակիչներ իրենց տնամերձ կամ սեփականաշնորհված հողերի վրա կառուցել են բնակարաններ, կամ այլ կառույցներ՝ առանց շինթույլտվության:

Այժմ աշխատանքներ են տարվում նշված թերությունները շտկելու ուղղությամբ:

ԵԼՈՒՅԹՆԵՐ

Տեղի ունեցան ելույթներ համայնքի բնակիչների կողմից, որոնք հիմնականում կապված էին տեղական տուրքերի հավաքագրման հետ: Նաև խոստացան, որ այսուհետ բարեխղճորեն կկատարեն իրենց առջև դրված հարկային պարտավորությունները:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Համայնքի բնակիչները, շնորհակալություն հայտնելով արդեն կատարվածի համար, առաջարկեցին անպայման շարունակել խմելու ջրի ներքին ցանցի ջրագցերի անցկացման, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգման աշխատանքները:

ՈՐՈՇՎԵՑ՝

հաշվետվությունն ընդունել ի գիտություն,

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏԱՎԱԶԴ ՀԱԿՈԲՅԱՆ